

**ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N <<ԾՔ-ՇՀԾՁԲ-15/3-17/2-2>>**

ք.Ծաղկաձոր

<<30>>մարտի 2017թ.

<<Ծաղկաձորի համայնքապետարանը>>, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ս.Տ.Բ.>> ՍՊ ընկերությունը, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Բրուսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2640500 (երկու միլիոն վեց հարյուր քառասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30 դեկտեմբերի 2017թ.:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

<sup>1</sup> Պայմանագրի օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում փրկանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհարկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՏՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Ծաղկաձորի համայնքապետարան  
Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9  
ՀՎՀՀ 03001885

Կենտրոնական գանձապետարան  
ՀՀ 900122002141

Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<Ս.Ս.Բ.>>ՍՊԸ

Հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 37

<<Արդշինինբանկ>> ՓԲԸ Շենգավիթ մ/6

ՀՎՀՀ 01209054

ՀՀ 2473600545110010

Տնօրեն

ԱԲ Գրություն



**ԾԱՂԿԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր	
Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում Ներկայացված է կից ֆայլով	
Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիր կնքելու պահից	30.12.2017թ.

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 Ծաղկաձորի համայնքապետարան  
 Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9  
 ՀՎՀՀ 03001885  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՀ 900122002141  
 Համայնքի ղեկավար *Ա. Հարությունյան*



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 <<Ա.Տ.Բ.>>ՍՊԸ  
 Հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 37  
 <<Արդշինհիբանկ>> ՓԲԸ Շենգավիթ մ/ճ  
 ՀՎՀՀ 01209054  
 ՀՀ2473600545110010



Հ/Հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայողերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Երևան և Հրազդան քաղաքում
		Տոյոտա կորպլա, 2008թ.
1	2	4
	<i>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</i>	
1	Բռնկման համակարգի ստուգում	անվճար
2	Սառեցման համակարգի ստուգում	անվճար
3	Յուղման համակարգի ստուգում	անվճար
4	Արտացման համակարգի ստուգում	անվճար
5	Կցորդման համակարգի ստուգում	անվճար
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	անվճար
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	անվճար
9	Աղջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	
10	Աղջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	անվճար
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
12	ABS համակարգի ստուգում	անվճար
13	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	անվճար
15	Թափքի վիճակի ստուգում	անվճար
16	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	անվճար
	<i>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</i>	
17	Շարժիչի հանում և տեղադրում	20,000
18	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0
19	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
20	Շարժիչի վերանորոգում	20,000
21	Նույնը DOHC դեպքում	0
22	Շարժիչի բարձիկի հանում տեղադրում	5,000
23	Բ/լիսեռի կախարիչի հանում և տեղադրում	5,000
24	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20,000
25	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10,000
26	Շարժիչի գլխիկի վերանորոգում	25,000
27	Փականի խցուկի փոխարինում	2,000
28	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5,000
29	Նույնը DOHC դեպքում	0
30	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	10,000
31	Հրիչների փոխարինում SOHC	0
32	Նույնը DOHC դեպքում	0
33	Ատամնավոր փոկի փոխարինում	20,000
34	Նույնը DOHC դեպքում	0
35	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10,000
36	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
37	Նույնը DOHC դեպքում	0
38	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
39	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	15,000
40	Մխոցային օղակների փոխարինում	20,000
41	Նույնը DOHC դեպքում	0
42	Թափանիվի հանում և տեղադրում	3,000
	<i>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</i>	
43	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2,000
44	Յուղի պոմպի փոխարինում	3,000
45	Նույնը DOHC դեպքում	0
46	Ղեկավարման բլոկի վերանորոգում	1,000
47	Բռնկման կարգավորում	1,000

48	CO կարգավորում	1,000
49	Խարճարակի հանում և տեղադրում	0
50	Խարճարակի վերանորոգում	0
51	Օդի գոլիչի փոխարինում	2,000
52	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5,000
53	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	15,000
54	Բենզամոդիչի փոխարինում	8,000
55	Վառելիքի գոլիչի փոխարինում	2,000
56	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1,000
57	Տրամյորի հանում տեղադրում	
58	Տրամյորի վերանորոգում	
	<b>3. Սառեցման և արտացման համակարգ</b>	
59	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0
60	Հովհարի հանում և տեղադրում	500
61	Ուղիատորի հանում և տեղադրում	7,000
62	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
63	Ուղիատորի վերանորոգում	10,000
64	Թերմոստատի փոխարինում	5,000
65	Ջրի պոմպի փոխարինում	15,000
66	Նույնը DOHC և V6 դեպքում	0
67	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
68	Ջրի պոմպի վերանորոգում	0
69	Նույնը DOHC դեպքում	0
70	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
71	Ընդարձակող բաքի փոխարինում	1,000
72	Խլարարի հանում և տեղադրում	5,000
73	Նույնը DOHC դեպքում	0
74	Ուղիատորի փողրակի հանում և տեղադրում	1,000
	<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>	
75	Բանվ. կամ գլխ. զլանի հանում և տեղադրում	
76	Բանվ. կամ գլխ. զլանի վերանորոգում	
77	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	
78	Կցորդման ոտնակի հանում տեղադրում	
79	Կցորդման ճուպանի հանում տեղադրում	
80	ՓՏ-ի հանում և տեղադրում	5,000
81	ՓՏ-ի վերանորոգում	5,000
82	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0
83	ՓՏ-ի աստյանի հանում և տեղադրում	0
84	Վազբաչակի շարժաբեղի փոխարինում	0
	<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>	
85	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	0
86	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	0
87	Բաշխիչ տուփի խցիկի փոխարինում	0
88	Կարդանի լիսեռի հանում և տեղադրում	
89	Կարդանի լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	
90	Կարդանի լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	
91	Կարդանի լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
92	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	
93	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	
94	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	
95	Առջևի կամ հետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում	
96	Կիսատնու առանցքակալի փոխարինում	
	<b>7. Կախոց</b>	
97	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0
98	Տրավերսի հանում տեղադրում	0

99	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում(հատ)	5,000
100	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5,000
101	Նույնը հետին տանող ամ-ի համար	
102	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0
103	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	3,000
104	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	0
105	Ցնցամեղմիչի բասակի փոխարինում	5,000
106	Զսպանակի հանում և տեղադրում(հատ)	500
107	Զսպանակի վրանների փոխարինում	500
108	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում(հատ)	5,000
109	Ներքևի լծակի հանում և տեղադրում(հատ)	5,000
110	Ներքևի լծակի վրանների փոխարինում (մի կողմ)	5,000
111	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5,000
112	Միջին ձգանի հանում և տեղադրում	0
113	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0
114	Վերևի լծակի հանում և տեղադրում	10,000
115	Վերևի լծակի վրանների փոխարինում	10,000
116	Գնդե հողակապերի փոխարինում	5,000
117	Ծայրականների հանում տեղադրում	5,000
118	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	5,000
119	Առջևի կայունարարի վրանների փոխարինում (հատ)	5,000
120	Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում	1,000
121	Հետևի զսպանակների փոխարինում	0
122	Հետևի ցնցամեղմիչների հանում և տեղադրում	5,000
123	Հետին ձգածողի հանում և տեղադրում (հատ)	0
124	Ետևի երկաթածուղի հանում և տեղադրում	10,000
125	Կայունարարի կանգունակների հանում և տեղադրում	5,000
126	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3,000
127	Անկյունագծային լծակի վրանների փոխարինում	3,000
128	Անվաբացքի կարգավորում	5,000
129	Զողման աշխատանքներ 1 քառ. սմ համար	300
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>		
131	Ղեկային կալունի հանում և տեղադրում	
132	Ղեկային կալունի վերանորոգում	
133	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	
134	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	
135	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	10,000
136	Նույնը DOHC դեպքում	0
137	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5,000
138	Նույնը DOHC դեպքում	0
139	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5,000
140	Նույնը DOHC դեպքում	0
141	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
142	ՀՈԻ ՂԿ-ի հանում և տեղադրում	10,000
143	ՀՈԻ ՂԿ-ի վերանորոգում	10,000
<b>9. Արգելակային համակարգ</b>		
144	Գլխ.զլանի հանում և տեղադրում	1,000
145	Գլխ.զլանի վերանորոգում	1,000
146	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	5,000
147	Բանվ.զլանի հանում և տեղադրում	1,000
148	Բանվ.զլանի վերանորոգում	1,000
149	Արգելակային համակարգի օդահանում	1,000
150	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	500
151	Առջևի սուպպորտի վերանորոգում	500
152	Արգելակային փողրակի փոխարինում	3,000
153	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3,000
154	Հետևի կոճղակների փոխարինում	3,000
155	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3,000

156	Ետևի արգելակային սկավառակի փոխարինում	3,000
157	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	500
158	ABS-ի հանում և տեղադրում	1,000
159	Չեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	1,000
160	Չեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1,000
<b>10. Էլեկտրասարքավորում</b>		
161	Էլեկտրասարքավորման վերանորոգում	15,000
162	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	100
163	Գեներատորի հանում և տեղադրում	5,000
164	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
165	Գեներատորի վերանորոգում	5,000
166	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5,000
167	Մեկնարկիչի վերանորոգում	5,000
168	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1,000
169	Ետևի լապտերի հանում և տեղադրում	1,000
170	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	1,000
171	Վազքաչափի հանում և տեղադրում	1,000
172	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում	0
173	Սարքերի պանելի հանում և տեղադրում	1,000
174	Արագաչափի հանում և տեղադրում	1,000
175	Ազդանշանի հանում և տեղադրում	1,000
176	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	1,000
177	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	5,000
178	Ազդանշանի համակարգի տեղադրում	10,000
179	Մագնիստլայի տեղադրում	1,000
180	Վառոցքային լապտերի հանում և տեղադրում	1,000
181	Էլ.հաղորդալարերի մասնակի վերանորոգում	3,000
182	Էլ.հաղորդալարերի հիմնական խուրջի հանում և տեղադրում	5,000
183	Էլ.հաղորդալարերի երկրորդային խուրջի հանում և տեղադրում	5,000
184	Էլեկտրական տվիչների փոխարինում	1,000
185	Էլ.անջատիչների փոխարինում	1,000
186	Վառոցքի մոմերի փոխարինում	5,000
187	Կոնդիցիոների լիցքավորում	10,000
188	Կոնդիցիոների վերանորոգում	10,000
<b>11. Այլ ծառայություններ</b>		
189	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	3,000
190	Ավտոմեքենայի լվացում	1,500
191	Անվի հանում և տեղադրում	500
192	Անվադողի վերանորոգում	1,000
193	Անվի բալանսավորում	1,000
194	Անվի վալց	500
195	CO-գոդման աշխատանքներ , զին 1 քառ. սմ-ի համար	300
196	Խառատային աշխատանքներ	1,000
197	Փականագործի աշխատանքներ	1,000
198	Քարշարկի ծառայություն զին 1կմ, համար	500
Ընդամենը ծառայություններ		576,700
<i>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</i>		2 չափաբաժին
		Տոյոտա կորոլլա, 2008թ.
<b>1. Շարժիչ</b>		
1	Շարժիչի բլոկ	30,000
2	Շարժիչի գլխիկ	20,000
3	Բարձիկ	25,000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	20,000

5	Շարժիչի վերանորոգման կ-տ	5,000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	10,000
7	Շարժիչի փական դուրս մղող	3,000
8	Շարժիչի փական ներս մղող	3,000
9	Շարժիչի փականի խցուկ	1,000
10	Ծնկածն լիսեռ	20,000
11	Ծնկածն լիսեռ խցուկ արջևի	10,000
12	Ծնկածն լիսեռ խցուկ հետևի	10,000
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	25,000
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	25,000
15	Հենակային տափողակ	5,000
16	Մխոց	20,000
17	Մխոցային օղակներ	45,000
18	Ատամնանիվ	10,000
19	Ատամնանվի փոկ	15,000
20	Շղթա	20,000
21	Հիդրոծգան	10,000
22	Հրիչ	0
23	Հիդրոհրիչ	10,000
24	Բաշմակ	8,000
25	Հանգստարար	10,000
26	Թափանիվ	2,000
27	Թափանվի սլակ	0
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	5,000
29	Շկիվ	1,000
30	Շարժաթև	10,000
31	Կարտերի միջադիր	10,000
32	Միջադիր	2,000
<b>2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>		
33	Յուղ, շարժիչի հանքային, 1 լիտր	
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	3,500
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5,000
36	Յուղի գտիչ	6,000
37	Յուղի պոմպ	30,000
38	Յուղի պոմպի շարժաթև	500
39	Յուղի ռադիատոր	500
40	Յուղի փողրակ	500
41	Յուղի ծորակ	500
42	Վառոցքի մոմ	5,000
43	Բենզոլաբ	10,000
44	Խառնարակ	0
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու	0
46	Ինժեկտորի ֆորսունկա	10,000
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական	40,000
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական	
49	Վառելանյութի գտիչ	10,000
50	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	500
51	Վառելանյութի փողրակ	2,000
52	Աքսելյատորի ճուպան	1,000
53	Օդի գտիչ	7,000
54	Ձերմաստիճանային տվիչ	2,000
55	Յուղի տվիչ	2,000
56	Բաշխիչ լիսեռի տվիչ	1,000
57	Օդի ծախսի տվիչ	30,000
58	Արագաչափի տվիչ	8,000
59	Հովհարի տվիչ	1,000
60	Ջրի տվիչ	1,000
61	Բենզոլաբի տվիչ	1,000

62	Սարման ընթացքի կարգավորիչ	1,000
63	Սարման ընթացքի տվիչ	1,000
64	Ղեկավարման համակարգիչ	25,000
65	Պարապ ընթացքի տվիչ	2,000
66	Ղրոսելային փականի տվիչ	2,000
67	Թբվածնի տվիչ	2,000
<b>3. Սառեցման և արտածման համակարգ</b>		
68	Հովհարի փոկ	0
69	Հովհար	5,000
70	Ուղիատոր	65,000
71	Ընդարձակող բաք	25,000
72	Ուղիատորի փողրակ	7,000
73	Թերմոստատ	10,000
74	Ջրի պոմպ	35,000
75	Ջրի պոմպի առանցքակալ	0
76	Ջրի պոմպի թևակ	0
77	Սառեցման հեղուկ 1 լիտր	2,000
78	Ջրի պոմպի սունանիվ	0
79	Հոլովակ	5,000
80	Փոկ	5,000
81	Փոկ կոնդիցիոների	0
82	Ծորակ	500
83	Խլալարի նեղիիր	3,000
84	Խլալարի կախոց	500
85	Կրոնչտեյն	500
86	Անուր /խամուտ/	300
87	Խլալար	35,000
88	Ռեզոնատոր	3,000
89	Վառարանի ռադիատոր	55,000
<b>4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>		
90	Կցորդման բանվորական գլան	
91	Կցորդման գլխավոր գլան	
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	
93	Կցորդման տանող սկավառակ	
94	Կցորդման տարվող սկավառակ	
95	Կցորդման առանցքակալ	
96	Կցորդման փողրակ	0
97	Փոխանցման տուփ	50,000
98	ՓՏ-ի առջևի խցուկ	5,000
99	ՓՏ-ի հետևի խցուկ	5,000
100	ՓՏ-ի առանցքակալ	15,000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	
103	ՓՏ-ի եղանիկ	
104	ՓՏ-ի ատամնանիվ	
105	Համաժամիչ	
106	Մուֆտ	
107	ՓՏ-ի վերանորոգման և-տ	
108	Տրանսմիսիոն յուղ 1 լիտր	5,000
109	ՓՏ-ի առաջնային լիսեռ	
110	Հերմետիկ	1,500
<b>5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ</b>		
111	Բաշխիչ տուփ	
112	Բաշխիչ տուփի խցուկ	
113	Բաշխիչ տուփի առանցքակալ	
114	Բաշխիչ տուփի ատամնանիվ	
115	Բաշխիչ տուփի լիսեռ	
116	Կարդանային լիսեռ	

117	Էլաստիկ մուՖտ	
118	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	
119	Կարդանային լիսեռի խաչուկ	
	<b>6. Առջևի և հետևի կամրջակներ</b>	
120	Ծտևի կամ առջևի կամրջակ	
121	Ռեդուկտոր	
122	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կ-տ	
123	ՂեՖֆերենցիալ	
124	ՂեՖֆերենցիալի սատելիտ	
125	Տանող ատամնանվի խցուկ	
126	Տանող ատամնանվի առանցքակալ	
127	ՂեՖֆերենցիալի առանցքակալ	
128	Կիսատռնի	
129	Կիսատռնու առանցքակալ	
130	Կիսատռնու միջադիր	
131	Կիսատռնու խցուկ	
132	Կարգավորիչ տափողակ	
	<b>7. Կայխոց</b>	
133	Տրավերս	1,000
134	Կրոնշտեյն	1,000
135	Չախ կամ աջ հողակալ	45,000
136	Չախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	5,000
137	Անվակուրդ	40,000
138	Անվակուրդի խցուկ	3,000
139	Անվակուրդի ներքին առանցքակալ	10,000
140	Անվակուրդի արտաքին առանցքակալ	10,000
141	Հետևի անվակուրդի ներքին առանցքակալ	10,000
142	Հետևի անվակուրդի արտաքին առանցքակալ	10,000
143	Չախ կամ աջ հողակալի խցուկ	5,000
144	Հարվածամեղմիչի թասակ	20,000
145	Ջսպանակ	0
146	Առջևի հարվածամեղմիչ	45,000
147	Հարվածամեղմիչների փոշեթիկնոց	1,000
148	Հարվածամեղմիչների վռան	1,000
149	Ներքևի լծակ	35,000
150	Ներքևի լծակի վռան	5,000
151	Կերևի լծակ	35,000
152	Կերևի լծակի վռան	5,000
153	Գնդե հողակալ	15,000
154	Առջևի կայունարար	20,000
155	Առջևի կայունարարի վռան	6,000
156	Առջևի կայունարարի առջևի վռան	1,000
157	Հետևի զսպանակ	0
158	Հետևի ցնցամեղմիչ	35,000
159	Հետևի մետաղաձող (շտանգա)	
160	Հետևի մետաղաձող (շտանգա) վռան	
161	Հետևի անկյունագծային լծակ	
162	Անկյունագծային լծակի վռան	
163	Ջսպակ (ռեստորա)	
164	Ջսպակի վռան	
165	Ջսպակի միջադիր	
166	Ջսպակի բռնիչ	
167	Աջ կամ ձախ ծգան	
168	Ծայրակալ	
169	Չգան մեջտեղի	
170	Անվահեծ	5,000
	<b>8. Ղեկային մեխանիզմ</b>	
171	Ղեկային կալուն	

172	Ղեկային կալունի առանցքակալ	
173	Ղեկային կալունի խաչուկ	
174	Հիդրոուժեղարար	45,000
175	Հիդրոուժեղարարի փոկ	6,000
176	Հիդրոուժեղարարի վերանորոգման կ-տ	20,000
177	Հիդրոուժեղարարի պոմպ	30,000
178	Հիդրոուժեղարարի սյունաի վերանորոգման կ-տ	10,000
179	Ղեկային ձող	
180	Ղեկային ձողի ծայրակալ	
181	Հիդրոուժեղարարի յուղ , 1 լիտր	3,000
182	Ճոճանակ	0
183	Ճոճանակի վրան	0
	<b>9. Արգելակային համակարգ</b>	
184	Գլխ.գլան	12,000
185	Գլխ.գլանի վերանորոգման կ-տ	1,000
186	Վակուումային ուժեղարար	30,000
187	Բանվ.գլան	8,000
188	Բանվ.գլանի վերանորոգման կ-տ	1,000
189	Արգելակային փողրակ	5,000
190	Սուպպորտի ուղղորդիչ	500
191	Սուպպորտի մանժետ	500
192	Առջևի արգելային կոճղակների կ-տ	25,000
193	Հետևի թմբուկային կոճղակների կ-տ	
194	Առջևի արգելակային սկավառակ	20,000
195	Հետևի արգելակային սկավառակ	20,000
196	Ձեռքի արգելակի ճոպան	10,000
197	ABS-ի տվիչ	10,000
198	Արգելակային հեղուկ, DOT-3-800 գրամ	1,000
199	Արգելակային հեղուկ, DOT-4-800 գրամ	2,000
200	Ձեռքի արգելակի ճոպան	0
	<b>10. Էլեկտրասարքավորում</b>	
201	Գեներատոր	70,000
202	Գեներատորի դիողային կամրջակ	20,000
203	Գեներատորի ռեկե	15,000
204	Գեներատորի առանցքակալ	7,000
205	Ստարտեր	80,000
206	Ստարտերի ռեկե	5,000
207	Ստարտերի ածուխ	5,000
208	Բեկդեքս	20,000
209	Ստարտերի կցորդիչ / ավտոմատ/	25,000
210	Առջևի լապտեր	10,000
211	Առջևի թարթիչ	5,000
212	Հետևի լապտեր	10,000
213	Հետևի թարթիչ	5,000
214	Արգելակային լապտեր	5,000
215	Լամպ	3,000
216	Էլեկտրական անջատիչ	1,000
217	Էլեկտրական տվիչ	1,000
218	Էլեկտրական չափիչ սարք	500
219	Բռնկման կողպեք	10,000
220	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	6,000
221	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	5,000
222	Վառոցքային լարերի խուրց	20,000
223	Վառոցքի մոմի ծայրակալ	1,000
224	Վազքաչափ	1,000
225	Վազքաչափի ճոպան	0
226	Արագաչափ	5,000
227	Ազդանշան	3,000

228	Ասանելվացիչ	3,000
229	Ապակեվացիչի շարժիչ	3,000
230	Դռների կենտրոնական փական	10,000
231	Ազդանշանային համակարգ	12,000
232	Մագնիտուս	5,000
233	Էլեկտրաամբարձիչ	15,000
234	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	15,000
235	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր զին 1դ/մ վերանորոգման համար	4,000
236	Դրմապակի	40,000
237	Կողային ապակիներ	20,000
238	Հետևի ապակի	30,000
Ընդամենը պահեստամասեր, քայուղեր, և այլ օժանդակ նյութեր		2,063,800
Ամբողջը		2,640,500
<b>ԱՅՈՒՊԱՅՄԱՆՆԵՐ</b>		Ծառայությունները սատուցվում են 2017թ-ի ընթացքում ըստ կարիքի առաջացման: Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին: Ծառայությունները պետք է մատուցվեն Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում առանց պահեստամասերի փոխարինման ծառայությունների ղեկավարում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում պահեստամասերի փոխարինումով ծառայությունների ղեկավարում: Առանձին ղեկավարում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:
<b>Վճարման պայմանները</b>		Յուրաքանչյուր մատուցված ծառայությունն ընդունելու օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 Ծաղկաձորի համայնքապետարան  
 Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9  
 ՀՎՀՀ 03001885  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՀ 900122002141  
 Համայնքի ղեկավար  
 Ա.Հարությունյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 <<Ս.Տ.Բ.>>ՍՊԸ  
 Հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 37  
 <<Արդշինբանկ>> Շենգավիթ մ/ճ  
 ՀՎՀՀ 01209054  
 ՀՀ 2473600545110010  
 Տնօրեն Ա.Բոխտյան



**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

<< դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում											Ընդամենը Տարի	
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	օկտոբեր	նոյեմբեր		
1.	Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար տրանսպորտային միջոցների կապիտալ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում	... %	... %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

\* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ**  
 Ծաղկաձորի համայնքապետարան  
 Հասցե՝ ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9  
 ՀՎՀՀ 03001885  
 Կենտրոնական գանձապետարան  
 ՀՀ 900122602141  
 Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան



**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**  
 <<Ա.Տ.Բ.>>ՍՊԸ  
 Հասցե՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 37  
 <<Արդշինհիմբանկ>> ՓԲԸ Հեղափոխ մ/6  
 ՀՀ 01209054  
 ՀՀ 2473600545110010

